



# Ազդարարության Trumpet's Sound **փող**

52-րդ ՏԱՐԻ, ԱՄՏՐԱԼԻԱ  
ՅՈՒՆԻՍԿՈՒՄ - ՓԵՏՐՈՒՄ 2021



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵՆՆ ՓՈՎ»  
Երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝  
հովիւ Հրաչ Գույունեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



### Կը խնդրենք աղօթել.

- համաճարակի աւարտի համար,
- փախստականներու համար,
- պատերազմի ժամանակ վիրաւորուածներու համար,
- աղքատներու եւ մոռցուածներու համար,
- առանց յոյսի ապրող երիտասարդներու համար,
- աջակցութեան կարիք ունեցող ընտանիքներու համար,
- մանուկներու համար,
- Աւետարանի տարածման համար:

### Բովանդակութիւն

Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը . . . . .	<b>3</b>
<i>Հովիւ՝ Հրաչ Գույունեան</i>	
Ապակիէ շիշը . . . . .	<b>4</b>
<i>Քաղուած</i>	
Սաղմոս 16 . . . . .	<b>6</b>
<i>Տոն Սրորմէր</i>	
Անճար կեանք . . . . .	<b>10</b>
<i>Նէյլ Պուրման</i>	
Որքանո՞վ կրնաք սխալուիլ . . . . .	<b>13</b>
<i>Ռէքս Տիրլավ</i>	
Ան, ով մի՛նչէս վերջ հաստատուն կը մնայ. . . . .	<b>15</b>
<i>ԸՍՄ</i>	

Կազմի նկարը՝ հայկական խաչքար,  
Օգոստոս 2007թ.:

**Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:**

## Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը

**Ի**նչպէ՞ս պէտք է մենք, որպէս քրիստոնեաներ ապրինք 2021 թուականին:

«Եթէ աշխարհէն եղած ըլլայիք, աշխարհ իրենները կը սիրէր. բայց որովհետեւ աշխարհէն չէք, հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ» (Յովհ. 15:19):

Մեր թագաւորութիւնը Երկինքն է:

«Արդ եթէ Քրիստոսին հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բաները փնտռեցէք, ուր Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը» (Կող. 3:1):

Աշխարհը քառասային վիճակի մէջ է: Պարզապէս նայեցէ՛ք քաղաքական իրավիճակին:

«Վերի բաներուն վրայ մտածեցէ՛ք, ո՛չ թէ այս երկրին վրայիններուն» (Կող. 3:2):

Նայեցէ՛ք համաճարակին եւ թէ որքա՞ն մարդիկ պէտք է համակերպուին այս հիւանդութեանը: Որքա՞ն կարող ենք դիմանալ: Յիշեցէ՛ք Պօղոս առաքեալին: Նոր Կտակարանի մէջ եղած Իր որոշ նամակները գրուած են բանտէն, ուր ոչ ուտելիք, ոչ ալ ջուր կար. չկար լոգարան, մաքուր օդ, ընկերներ...: Բայց առաքեալը ցնծութեան մէջ էր: Ան երբէք չխօսեցաւ իր դժուարութիւններու մասին, այլ միշտ Քրիստոսով ուրախ էր:

«Ամէն բանի մէջ գոհութիւն տուէ՛ք. վասն զի այս է Աստուծոյ կամքը Քրիստոս Յիսուսով ձեր վրայ» (Ա Թես. 5:18):

Այո՛, մենք շատ բան ունինք սորվելու: Երբէք մի՛ մոռնաք, որ կառավարութիւնը Աստուծոյ կողմէն կարգուած է:

«Ամէն մարդ իր վրայ եղած իշխանութիւններուն թող հնազանդի. վասն զի չկայ իշխանութիւն մը որ Աստուծմէ չըլլայ եւ անոնք որ կան՝ Աստուծմէ կարգուած են» (Հռոմ. 13:1):

Շատ հաւատացեալներ կը ծուլանան միասին հաւաքուելու մէջ՝ պատճառաբանելով «Zoom»-ի հասանելիութիւնն ու առաւելութիւնը:

«Եւ մէկտեղ հաւաքուիլը չթողունք, ինչպէս ոմանք սովորութիւն ունին. հապա մէկզմէկ յորդորենք ու այնչափ աւելի՝ որչափ այն օրուան մօտենալը կը տեսնէք» (Եբր. 10:25):

Վերջին ժամանակներուն մէջ ըլլալով մենք շատ լաւ գիտենք, որ այս բաները տեղի պիտի ունենան:

«Քանզի այն ատեն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլլայ, որու նըմանը աշխարհի սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, ո՛չ ալ պիտի ըլլայ» (Մատթ. 24:21):

Երբէք մի՛ մոռնաք Տիրոջ խոստումները:

«Սորվեցուցէ՛ք անոնց որ այն բոլոր բաները պահեն՝ ինչ որ ես ձեզի պատուիրեցի: Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս վերջը: Ամէն» (Մատթ. 28:20):

Հ. Գ.

## Ապակիէ շիշը

**Ե**րբ կը կարծես որ կեանքդ անտանելի է եւ 24 ժամը բաւարար չէ մէկ օրուայ մէջ, յիշէ այս պատմութիւնը եւ քաջալերուէ:

Համալսարանի դասատու մը, իր փիլիսոփայութեան դասարանին աշակերտներուն առջեւ կեցաւ: Ան մի քանի առարկաներ ունէր իր սեղանին վրայ:

Երբ դասապահը սկսաւ, ան կափարիչով ապակիէ մեծ պարապ շիշ մը առաւ եւ սկսաւ զայն լեցնել կօլֆի գնդակներով: Ապա հարցուց աշակերտներուն եթէ շիշը լեցուն էր: Անոնք համաձայնեցան, թէ այդպէս էր: Ուսուցիչը խճաքարերով լեցուն տուփ մը առաւ եւ զանոնք շիշին մէջ պարպեց: Քիչ մը ցնցեց շիշը եւ քարերը տեղադրուեցան կօլֆի գնդակներուն միջեւ գտնուած պարապութեան մէջ: Նորէն հարցուց դասատուն եթէ շիշը լեցուն է: Այո՛, ըսին աշակերտները: Յաջորդիւ պարոնը տուփ մը աւագ առաւ եւ թափեց շիշին մէջ: Աւագը ամէն կողմը կեցուց: Կրկին հարցուց եթէ շիշը լեցուն է: Միաբերան Այո ըսին

հետաքրքիր ուսանողները: Ապա փրոֆէսորը սեղանին տակէն երկու գաւաթ սուրճ հանեց եւ զայն ամբողջութեամբ թափեց շիշին մէջ, որը աւագին պարապ ձգած տեղերը լման լեցուց: Աշակերտները լման խընդացին:

«Հիմա», ըսաւ դասատուն, երբ խնդուք մարեցաւ, «Կ'ուզեմ գիտնաք, որ այս շիշը ձեր կեանքը կը ներկայացնէ»: Կօլֆի գնդակները կարեւոր բաներ են, ընտանիք, զաւակներ, առողջութիւն եւ նախասիրած առարկաներդ: Բաներ որ եթէ ամէն ինչ կորստի եւ միայն անոնք մնան, տակաւին կեանքդ լեցուն պիտի ըլլայ: Խճաքարերը այդ բաներն են որ արժէքատր են, ինչպէս գործդ, տունդ եւ ինքնաշարժդ: Իսկ աւագը մնացեալ ամէն մանր-մունր բաներն են:

Եթէ նախ աւագը դնես շիշին մէջ, տեղ պիտի չըլլայ խճաքարերուն կամ գնդակներուն: Նոյնն է կեանքի պարագային: Եթէ բոլոր ոյժդ եւ զօրութիւնդ մանր-մունր բաներ ընելով վատնես, բնաւ տեղ պիտի չունենաս իրապէս կարեւոր բաներուն

Ուստի ուշադրութիւն ըրէք այդ բաներուն, որոնք ձեր ուրախութեան կ'ազդեն: Չաւակներուդ հետ խաղցիր: Բժշկական քննութիւններդ ժամանակին ըրէ: Կողակիցդ ճաշարան տար: Միշտ ժամանակ պիտի ըլլայ տունը մաքրելու եւ կաթոճ ծորակը նորոգելու: Նախ կօլֆի գնդակներուն հոգ տար: Նախապատուութեանդ շարքը ճշդէ: Մնացեալը աւագ է»:

Աշակերտներէն մին ձեռքը բարձրացուց եւ հարցուց թէ սուրճը ի՞նչ կը ներկայացնէ: Ուսուցիչը ժպտեցաւ: «Ուրախ եմ որ հարցուցիր», ըսաւ: «Այդ կը ցուցնէ թէ որքան ալ լեցուն երեւի կեանքդ, միշտ տեղ կայ մի քանի գաւաթ սուրճ խմելու բարեկամի մը հետ»:

«Առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը եւ անոր արդարութիւնը ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին» (Մատթ. 6:33):

Քաղուած «Աւետարեւր ձիթենին» գիրքէն



## Սաղմոս 16

16-րդ Սաղմոսը մեսիական Սաղմոսներու շարքի երրորդ Սաղմոսն է: Այն Դաւիթի Սաղմոսներէն մէկն է, եւ չնայած որ Սաղմոսի մէջ գրի-խատր հերոսը ինքն է, սակայն այն կը վերաբերի Մեսիային ու Անոր յարութեանը:

Դաւիթը կը սկսի աղօթքով՝ Աստուծոյ պահպանող շնորհքը խնդրելով: Ասիկա աղօթք մըն է, որը պէտք է իւրաքանչիւրիս շրթունքներուն վրայ ըլլայ: Շէշտը դուրսած է Տիրոջ պահպանող զօրութեան վրայ՝ միտք, որը յաճախ կը կրկնուի Սաղմոսաց գիրքին մէջ: Նոյնը կը տեսնենք Սաղմոս 121-ի մէջ. «Անիկա քու ոտքդ չողացնէ, ու քու պահպանող չքնանայ»: Այս Սաղմոսին մէջ սաղմոսագիչը Աստուծոյ կը խնդրէ, որ իրեն պահէ, քանի որ իր յոյսը Անոր վրայ դրած է: Ան այսպէս խնդրելու իրատունք ունէր, քանի որ իր վստահութիւնը Աստուծոյ վրայ դրած էր: Ասիկա զարմանալի ճշմարտութիւն է: Երբ մենք՝ ոչինչներս, մեր վստահութիւնը Աստուծոյ վրայ կը դնենք կամ Իրեն կ'ապաւիւնինք, ապա կրնանք ակնկալել, որ Աստուած հոգ պիտի տանի մեր մասին:

Դաւիթը նաեւ համոզուած էր, որ Աստուած իր Տէրն է, եւ ան երբէք չէր հասպաղէր մարդկանց առջեւ վկայելու: Լաւ է յիշել, որ առանց Տիրոջը, մենք ոչ մէկ բարիք չունինք: Ան է մեր միակ բարութիւնը:

Այս համարներուն մէջ Դաւիթը Աստուծոյ մասին երեք տխտղոս կամ անուն կ'օգտագործէ՝ Էլ, Յահվէ եւ Ատօնայ: Էլ-ը, որը կը նշանակէ Աստուած, յաճախ կը կցուի ածականի հետ, ինչպէս օրինակ՝ արդար Աստուած: Ատր նման կայ եւս մէկ անուն՝ Էլ-Շատտայ, այսինքն՝ Ամենակարող Աստուած: Ան Յահվէն է, ուխտը պահող Աստուածը, եւ Ան Ատօնայն է՝ զերիշխան Տէրը:

Հետաքրքրական է, թէ 3-րդ համարին մէջ ո՞վ է խօսողը: Արդեօք Դաւիթը իր մասի՞ն կ'ըսէ, թէ կ'ուրախանայ Տիրոջ սուրբերով, թէ՞ Տէր Յիսուսն է խօսողը, որ Իր հաճութիւնը Իր սուրբերու մէջ է: Եթէ Դաւիթն է, ուրեմն ինքներս մեզ պէտք է հարցնենք, թէ արդեօք մեր ուրախութիւնը Տիրոջ ժողովուրդին մէջ է: Որտէ՞ղ կը գտնենք մեր ուրախութիւնը: Կասկած չկայ, որ սուրբերը կատարեալ են. Աստուած Իր հա-

մար առանձնացուածներուն կատարեալ կը տեսնէ: Եթէ Աստուած Իր հաճութիւնը սուրբերու մէջ կը գտնէ, ուրեմն մենք նոյնպէս պէտք է ուրախութիւն գտնենք անոնց մէջ:

Դաւիթը կը մտածէ այլ աստուածներ երկրպագողներու մասին: Այս Սաղմոսի նկատմամբ մակերեսային մօտեցում ունեցողները կը պնդեն, թէ մենք այլ աստուածներով չենք անհանգստանար, ինչպէս հեթանոսները կ'ընեն: Բայց հարցը, որը պէտք է տանք, այն է, թէ արդեօք մեր ուշադրութիւնը այլ աստուածներու վրայ սեւեռա՞ծ ենք, թէ՞ ոչ: Այսօր շատերը սփորդին կամ նիւթին կը պաշտեն: Մենք մեր տուններն ու աշխատանքի ասպարէզը աստուածներ վերածելու փորձութեան առջեւ ենք: Իսրայէլցիներու մշտական խնդիրներէն մէկն այն էր, որ անոնք կ'ուզէին նմանուիլ իրենց շրջապատող ժողովուրդներուն: Նոյնիսկ հաւատացեալները ազատ չեն այս փորձութիւնէն: Հեշտ չէ ամբողջէն առանձնանալն ու տարբերուիլը:

Անոնք, որոնք կը խոնարհին այլ աստուածներու առջեւ շուտով կը հանդիպին տարբեր ցաւերու: Այսօրուայ երկրպագողները բաւարարուածութիւն կը փնտռեն, սակայն այս աշխարհի աստուածները բաւարարուածութիւն չեն պարգեւէր: Անոնք իրենց երկրպագողներուն դատարկութեան զգացողութիւն կը պարգեւեն: Անոնք, որոնք հարստութեան կը ձգտին երբէք չեն բաւարարուիր իրենց ունեցածով: Այս աստուածները կը շարունակեն իրենց երկրպագողներէն աւելի մեծ հաւատարմութիւն պահանջել: Դաւիթը վճռական էր, որ այլ աստուածներու զոհասեղաններուն պարգեւներ պիտի չբերէր: Ան յաւիտեանս իր Տէր Աստուծոյն պիտի երկրպագէր:

Դաւիթը կրնար այդպէս ընել Աստուծոյ վրայ ունեցած իր բացարձակ վստահութեան շնորհիվ: Ան գիտէր, որ Տէրը իր բաժինը պիտի պահէր եւ Իր տուածը ապահով պիտի մնար: Ան կրնար հանգստանալ այն հաւաստիացումով, որ Տէրը իրեն տուած է բարի ժառանգութիւն: «Վիճակներ ելան ինձի զուարճալի տեղերու մէջ»: Գուցէ Դաւիթը կը մտածէր այն մարդկանց մասին, ովքեր դժգոհ էին իրենց ստացած հողակտորներէն՝ սահմանները հաստատելու ժամանակ: Անոնք, որոնք Տիրոջը կը նային գիտեն, որ Ան հոգ կը տանի իրենց մասին եւ ոչ մէկ բանի պակասութիւն պիտի չունենան:

Պօղոս առաքեալը գիտէր ինչպէս վարուիլ հարստութեան եւ աղքատ-

տութեան հետ: Փիլիպ. 4:11-13-ի մէջ ան կ'ըսէ. «Ոչ թէ կարօտութեան համար կ'ըսեմ. վասն զի ես սորվեցայ գոհ ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ: Գիտեմ չքատրութիւն քաշելը, գիտեմ շատը ունենալը. ամէն բանի մէջ ամէն կերպով աղէկ սորվեր եմ թէ՛ կշտանալը, թէ՛ անօթեմալը, թէ՛ շատ ունենալը եւ թէ՛ պակասութիւն քաշելը: Ամէն բանի կարող եմ անով՝ որ զիս զօրացուց»: Լաւ է բարարարուիլ մեր վիճակով: Լաւ է զհտակցիլ, որ եթէ Տէրը ուղղորդէ մեր ճամփաները, մենք միշտ լաւ ժառանգութիւն կ'ունենանք:

Դաւիթը կ'ըսէ, թէ ո՞րն է Տիրոջ օրհնելու պատճառը: Տէրը ամէն ժամանակ զինք առաջնորդած էր՝ տալով իրեն անհրաժեշտ խրատը: Ան զիշերները Տիրոջմէ ուղղութիւն կը ստանար: Սաղ. 119:55-ի մէջ ան գրեց. «Ո՛վ Տէր, զիշերը քու անունդ յիշեցի ու քու օրէնքդ պահեցի»: Իսկ Սաղ. 63:6-ի գրեց ըսելով. «Անկողնիս վրայ քեզ կը յիշեմ, զիշերուան պահերուն մէջ քու վրայովդ կը մտածեմ»: Ուրիշներ իրենց անկողիններու վրայ չարագործութիւններ կը մտածէին, բայց Դաւիթի ուրախութիւնը Տիրոջ մէջ էր: Չարմանալի չէ, որ Դաւիթը կը շարունակէ ըսելով, որ իր սիրտը ուրախ է:

8-րդ համարը անցումային համար է: Դաւիթը Տիրոջ հետ իր ունեցած յարաբերութեան մասին մտածելէ ետք կ'անցնի Մեսիայի մասին մտածելու: Լաւ էր, որ Դաւիթը Տիրոջը ամէն ատեն իր առջեւ դրաւ, եւ որ Տէրը իր աջ կողմն էր՝ առաջնորդելով իրեն: Այնուամենայնիւ, այս խօսքերը ճշմարիտ են Տէր Յիսուսի համար: Ան Տիրոջը պատուարը տեղը դրաւ, եւ հետեւաբար ան երբէք պիտի չսասանէր:

Դաւիթը Աստուծոյ մասին կը մտածէ, որ իր աջ կողմն է եւ պատրաստ իրեն տալու անհրաժեշտ օգնութիւնը: Ասիկա ճշմարիտ է նաեւ Մեսիայի համար: Սակայն, երբ կը կարդանք Մաղմոս 110-ը կը տեսնենք, որ Աստուած Մեսիային կ'ըսէ «Նստե՛ իմ աջ կողմս, մինչեւ քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեն»: Մեսիան իշխանութիւն ունեցող դիրք ունի:

Չնայած խօսողը Դաւիթն է, սակայն Մեսիայի մասին մտքերը անլի ակնյայտ կը դառնան: Տիրոջ հանդէպ իր վստահութեան մէջ Դաւիթի սիրտը ուրախ էր: Տէրը կը պահէր զինք ասպահովութեան մէջ: Սակայն նոյնիսկ այստեղ կայ այն իմաստը, որ Դաւիթը այս կեանքի սահմաններէն այն կողմ կը նայէր:



Դաւիթը շատ յստակ կը հաւատար, որ Շեուլ-էն այն կողմ կեանք կայ: Շեուլը մահացած մարդկանց հոգիներու վայրն է: Հին Կտակարանի սուրբերուն ամբողջովին յայտնուած չէր հանդերձեալ կեանքի մանրամասները: Անոնք միայն գիտէին, որ մահէն ետք ինչ-որ վայր մը կայ: Դուկաս 16-րդ գլխի մեծահարուստի եւ Ղազարոսի պատմութիւնէն կը տարվինք, որ Շեուլը բաղկացած է երկու մասերէ, եւ որ անհնարին է տանջանքի վայրէն անցնիլ հանգիստի վայր: Այնուամենայնիւ, Դաւիթը գիտէր, որ իր բաժինը անորոշութեան վայրը չէր, այլ որ ինքը ճիշտ ժամանակին պիտի մտնէր Տիրոջ ներկայութեան մէջ: Այնտեղ ան պիտի վայլէր Աստուծոյ աջ կողմի հաճութիւնները:

10-րդ համարի մէջ շատ աւելի հեշտ է տեսնել Մեսիային: Ան ճաշակեց մահը մեզ համար, բայց գիտէր, որ իր մահը շատ կարճ պիտի տեւէր: Երբ այս Սաղմոսը դիտարկենք, որպէս մեսիական Սաղմոս, ապա կը տեսնենք, որ Տէրը ոչ միայն չմնաց մահացածներու աշխարհին մէջ, այլեւ Իր մարմինը ապականութիւն չտեսաւ: Երբորդ օրը գերեզմանէն յարութիւն առաւ եւ յաջորդ 40 օրերու ընթացքին յայտնուեցաւ Իր յարուցեալ մարմինով:

Տէր Յիսուսի ժամանակակիցները չկրցան հասկնալ ասիկա: Յարութեան առաւօտեան Մարիամ Մագդաղենացիի թախսանաքին աղաչանքի հիման վրայ Պետրոսն ու Յովհաննէսը գացին Տէր Յիսուսի գերեզման: Անոնք տեսան, որ Տէրը այնտեղ չէ, բայց Անոր գերեզմանի կտորները կոկիկ դրուած էին այնտեղ: Յովհաննէսը հասկցաւ, որ ասիկա միայն մէկ բացատրութիւն ունի: Տէրը մեռելներէն յարութիւն առած է: Իր Աւետարանին մէջ ան կարծես թէ խոստովանական կերպով կը գրէ ըսելով. «Այդ ժամանակ դեռ Գրուածքը չէին գիտեր, թէ պէտք է որ անիկա մեռնելներէն յարութիւն առնէ»:

Այժմ Տէր Յիսուսը Հայր Աստուծոյ աջ կողմն է: Իր համար յաիտենական ուրախութիւն կայ, սակայն Իր ուրախութիւնը կատարեալ պիտի ըլլայ, երբ Իր բոլոր փրկագնածները Իր մօտ ըլլան ու վայելեն Իր ներկայութիւնը: Երկրի վրայ մենք մեր աչքերը կը փակենք այն հաստատուն համոզմունքով, որ պիտի մտնենք Հօր ներկայութեան մէջ ու վայելենք յաիտենական ուրախութիւնը:

Մի քանի հարցեր կան, որոնց մասին պէտք է մտածենք.

- Արդեօք կատարեալ վստահութիւն ունի՞նք, որ Տէրը կարող է պահել մեզ մինչեւ մեր կեանքին վերջին շունչը:
- Արդեօք ամբողջ սրտով Տիրոջը կը փնտռե՞նք, թե՞ կը հետեւինք այս աշխարհի աստուածներուն:
- Արդեօք Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնե՞նք Իր բազմաթիւ օրհնութիւններուն համար:
- Արդեօք ուրա՞խ ենք մեզ սպասվող հեռանկարով:

Տոն Սթոնըրը

## Անմար կեանք

«Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնած ու բեռնատրուածներ եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ: Իմ լուծս ձեր վրայ առէք եւ ինձմէ ստրկեցէ՛ք՝ որ հեզ եմ ու սրտով խոնարհ եւ ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք. վասն զի իմ լուծս քաղցր է եւ իմ բեռս թեթեւ» (Մատթ. 11:28-30):

Աւստրալիոյ վարչապետներէն մէկը, հաւանաբար հիասքափուած ըլլալով իր ուսերուն վրայ դրուած սպասելիքներէն, հետեւեալ խօսքը ըսաւ. «Կեանքը երբէք հեշտ չէ եղած»: Մարդիկ կը յարձակէին իր վրայ ու կը ծաղրէին զինք, իրմէ հեշտ կեանք կը պահանջէին, կարծես թէ այդ իրենց հիմնարար իրաւունքը ըլլար:

Իսկապէս, շատ երկար տարիներ մարդկութիւնը ձգտած է տարբեր ճանապարհներով թեթեւցնել առօրեայ կեանքի բեռը: Բայց եթէ իսկապէս կ'ուզենք հասնիլ անվերջ հեշտութեան վաղանցիկ նպատակին, ապա արդեօք պատրա՞ստ ենք յաղթահարելու այն ամէնը, ինչը կը խանգարէ կամ կը ծանրաբեռնէ մարդկային սիրտը:

Մենք հեշտութիւն կը փնտռենք, սակայն տարօրինակն այն է, որ չնայած հեշտութեամբ կարող ենք պատկերացնել ամէն տեսակի վախերն ու տառապանքները, սակայն չենք կրնար պատկերացնել որեւէ իրական հանգամանք, որը կրնայ անվերջանալի երջանկութիւն ու գոհունակութիւն պարգեւել մեզ: Մեր բոլոր պատկերացումները, ուշ թէ շուտ,

մեզ համար ձանձրացուցիչ ու յոգնեցուցիչ կը դառնան: Սակայն ինչո՞ւ է այդպէս:

Թէրեւս պատճառն այն է, որ մենք հակուած ենք կենտրոնանալու մեր ճանչցած մարդկանց, մեր կատարած արարքներու եւ մեր գացած տեղերու վրայ, փոխանակ մեր կեանքի իրական բնոյթի վրայ կենտրոնանալու: Մեր կեանքը՝ սկսած բեղմնատրման պահէն կ'ընթանայ դէպի մահ: Ինչպէս աւագէ ժամացոյցի աւագի հատիկը, ժամանակը միշտ կը սպառուի եւ մեր մահը աւելի կը մօտենայ: Ասիկա է խնդիրը: Բոլորս գիտենք, որ օր մը պիտի մահանանք, բայց կը փորձենք ապրիլ այնպէս, կարծես պիտի չպատահի մեզի հետ: Մեզ պարուրող վիշտերէն եւ պայքարներէն վեր բարձրանալու համար մենք պէտք է հասկնանք ու գտնենք մահուան ցնցող փաստի պատասխանը: Միայն այդ ժամանակ կրնանք յոյս ունենալ իրական եւ տեսական ներքին խաղաղութիւն ունենալու: Արդեօք կա՞յ որեւէ միջոց: Արդեօք կա՞յ պատասխան:

Ինչ-որ մէկը այս հարցը տուած է. «Եթէ Աստուած մարդ դառնար, ապա ինչպիսի՞ն կ'ըլլար Ան»: Այս հարցին, որպէս պատասխան շատ մտքեր կրնաք առաջարկել, բայց ատոնցմէ մասնատրապէս մէկը յատուկ կերպով պէտք է ընդգծել: Եթէ Աստուած մարդ դառնար, ապա հաստատ պիտի յաղթէր մահուան. մահը պիտի չկրնար յաղթել զինք:

Աստուած մարդ դարձաւ. Ան մարդկային բնոյթով քալեց երկրիս վրայ, Ան փորձառեց մեր տառապանքներն ու վիշտերը, եւ չնայած արտաքինով սովորական մարդ էր, սակայն Ան ապացուցեց, որ Աստուծոյ Որդին ու աշխարհի Փրկիչն է: Ինչպէ՞ս: Ան յաղթեց մահուան: Ան անկարող չէր մահուան դիմաց. մահը չկրցաւ եւ ոչ ալ կրնար յաղթել զինք: Ան, որուն Գալիլիացի մարգարէ անուանեցին՝ Յիսուս Նազովրեցին, Աստուծոյ պատասխանն է յաւիտենական խաղաղութեան համար:

Յիսուսը բժշկեց հիւանդներուն ու անդամալոյծներուն, յարուցանեց մեռելներուն, սակայն Ան մահացաւ խաչի վրայ, ոչ թէ Իր համար, այլ որպէսզի մեր մեղքերու համար Աստուծոյ արդար բարկութեան պատիժը կրէ: Ան յաղթեց սարսափելի մահուան ու յարութիւն առաւ, որպէսզի Իր չմարող եւ մահուան յաղթող կեանքը պարգեւէ բոլոր անոնց, որոնք Իրեն պիտի դառնան ու իրենց յոյսը Իր վրայ պիտի դնեն:

Անոնք, որոնք փնտռեցին ու գտան Իր սէրն ու ներումը, Աստուծոյ

շնորհքով կը բաժնեկցին Իր փառաւոր ու անմահ կեանքը: Չնայած անոնք կը հանդիպին վիշտի, տառապանքի, հիւանդութեան ու տխրութեան, սակայն անոնք այդ ամէնի մէջ կը ստրվին խորը ուրախութեամբ եւ իրական խաղաղութեամբ կեանք մը ապրիլ, քանի որ ունին կեանք մը, որը չի կրնար մահանալ:

Իհարկէ, բոլորը կ'ուզեն այդպիսի կեանք մը ունենալ, բայց քիչերը պատրաստ են վճարելու ապաշխարութեան եւ Տէր Յիսուս Քրիստոսի փառաւոր ու սիրալիր տէրութեանը ենթարկուելու «զինը»: Շատերը կը խորհին, թէ շատ բարձր է զինը: Սակայն արդեօք այդպէ՞ս է: Արդեօք մե՞ծ բան է մեղքի կեղտոտ լաթերը մէկ կողմ նետելն ու արքայական ընտանիքի վայել հագուստ հագնելու համար այդ զինը վճարելը: Արդեօք մե՞ծ բան է ձեր ձախողած ու դառը իմաստութիւնէն հրաժարիլն ու երկնային սուրբ ու խաղաղ իմաստութիւն ունենալու համար այդ զինը վճարելը: Արդեօք մե՞ծ բան է մահուան ստուերի երկիրը լքելն ու չմարող կեանքի պայծառ բարձունքներուն հասնելու համար այդ զինը վճարելը:

Ո՛չ, զինը բարձր չէ, աւելի շուտ՝ մեր բնութիւնը ծայրահեղ ըմբոստ է, եւ մեր սիրտը չափազանց կարծր է: Բայց պարտադիր չէ, որ այդպէս մնայ: Մտիկ ըրէք Տէր Յիսուսի կանչին, անձամբ փնտռեցէք զինը, այդ ժամանակ Իր միջոցով յաւիտենական եւ անմար կեանք պիտի գտնեք:

Նէյլ Պուքման




---

**«Ով Իսրայել, մտիկ ըրէ, մեր Տէր Աստուածը մի միայն՝ Տէր է: Քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր Հոգիովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրէ»:**

**Բ Օրինաց 6:4-5**

## Որքան՞վ կրնաք սխալուիլ

**Ե**րկուսը տարակուսած էր: Ան երկար տարիներու փորձ ունէր, որպէսզի յստակ գաղափար ունենար Աստուծոյ՝ մարդկանց կեանքերուն մէջ գործելու կերպերու վերաբերեալ: Իսկապէս, ամէն ինչ շատ պարզ է. եթէ բարիք ընես, Աստուած կ'օրհնէ քեզ՝ կեանքիդ մէջ բարիքներ տալով, իսկ եթէ չարիք ընես՝ ապա կրնաս ակնկալել ամէն տեսակի տառապանք ու դժուարութիւն:

Ինչպէս արդէն վերը նշեցինք, Երկուսը տարակուսած էր: Ան իր ընկերոջ Յորի մասին միշտ լաւ կարծիք ունէր, սակայն Յորի ունեցումաձքի ահռելի կորուստի, որդիներու մահուան եւ սարսափելի հիւանդութեամբ տառապելու լուրերը զինք դրդեցին ենթադրելու, թէ Աստուած Յորին բան մը կ'ուզէ հասկցնել, թէ իր կեանքին մէջ սխալ մը կայ: Ան կը մտածէր, թէ Յորի կեանքին մէջ ծածուկ մեղք մը կայ: Աստուած արդար է եւ երբէք նման բան թոյլ չէր տար, եթէ անձը իսկապէս արժանի չ'ըլլար ատոր: Երկուսը կեանքը կը դիտարկէր իր սահմանափակ աստուածաբանութեան տեսանկիւնէն: Այն իրեն ապահովութեան եւ պաշտպանութեամբ ըլլալու զգացում կուտար: Չափազանց սարսափելի է մտածել, որ կ'այրիքնք այնպիսի աշխարհի մը մէջ, որ որեւէ մէկու հետ որեւէ բան կրնայ պատահիլ: Պէտք է, որ ինչ-որ պատճառ ըլլար, թէ ինչու այս ամէնը Յորի հետ պատահեցան եւ ոչ թէ իր հետ: Աստուծոյ՝ պարգեւատրելու եւ պատժելու գաղափարը, անկասկած, շատ գրավիչ էր, եւ իրեն ապահովութեան զգացում մը պարգեւած էր: Անշուշտ Յորի նման տառապանքի պիտի չհանդիպէր, քանի որ իր կեանքն անարատ էր: Գուցէ մեզ համար դժուար է իր անունն արտասանելը, սակայն Երկուսի մէջ բնատրութեան այնպիսի զիծեր կան, որոնք կան նաեւ շատերու մէջ: Ան գոհ էր իր աստուածաբանութեամբ, որոս մէջ ճշմարտութեան քիչ տոկոս կար. այն ատելի շուտ ուրիշներուն հանդիպած տառապանքներէն ինքնպաշտպանական գաղափարախօսութիւն էր:

Յորին կը մտահոգէր ոչ միայն իր տառապանքի մեծութիւնը, այլեւ այն առեղծուածը, թէ ինչո՞ւ այս ամէնը իր հետ պատահեցան, իսկ Երկուսը մտահոգուած էր իր սահմանափակ աստուածաբանութեամբ:

եամբ, որը ինչպէս յայտնի եղաւ իսկական պատուհաս դարձաւ Յորի համար՝ ծանրաբեռնելով վերջինիս մեղաւորութեան զգացումով:

«Յոր»-ի գիրքը կարդալով կը յայտնաբերէք, որ Յորը իր չպատասխանուած հարցերու հետ պայքարելով շատ աւելի մօտ էր Աստուծոյ, քան Եղիփազը իր աստուածաբանութեան պարզունակ պատասխաններով: Որքա՞ն սխալ էր Եղիփազը: Կը պարզուի, թէ Յորի տառապանքը ոչ թէ իր վատ ըլլալու պաճառով էր, այլ ընդհակառակը՝ իր շատ լավ ըլլալու պատճառով:

Իրականութեան մէջ տեղի ունեցածի խորհրդաւոր ճշմարտութիւնը շատ աւելին էր, քան Եղիփազը իր նեղ աստուածաբանութեամբ կրնար ընկալել: Ինչպէ՞ս կրնար ան ենթադրել, որ Յորի հետ պատահածը Աստուծոյ եւ աստանայի միջեւ տեղի ունեցած սուկայի ու աներեւոյթ բախման արդիւնք էր: Ինչպէ՞ս կրնար գիտնալ, որ Աստուած Յորին ընտրած էր, որպէս հերոս, եւ որ Աստուած Ինքնիրեն պիտի յայտնէր Յորին ամպրոպի զօրութեամբ ու չափազանց շատ օրհներ գինք:

Պատմութեան աւարտին կը տեսնենք, որ Յորը ճիշտ էր, եւ փոխանակ Եղիփազի մեղադրանքն ընդունելու, Յորը Աստուծոյ զոհ մատուցեց, որպէսզի Աստուած ներէր Եղիփազին՝ Իր մասին այդպէս խօսելու համար: Եղիփազի՝ իրականութեանը չհամապատասխանող յայտարարութիւնները Աստուծոյ պատիւ չբերաւ: Հետաքրքրական է չէ՞, թէ որքա՞ն սխալ կրնանք ըլլալ, երբ մարդկանց ու անոնց իրավիճակներու մասին կը խորհինք: Պարզապէս վստահ ըլլալը չի նշանակէր, որ ճիշտ ենք: Եղիփազի նման կը խորհինք, թէ մեր գիտցածը այն ամէնն է, ինչը յայտնի է անձի կամ իրավիճակի մասին: Թերեւս կան այնպիսի փաստեր կամ հանգամանքներ, որոնք բոլորովին ծածուկ են, եւ որոնց մասին երբէք չենք կրնար ենթադրել: Աստուծոյ լաւ չհանչնալը կամ ուրիշներու կեանքն մէջ Իր կատարածները չհասկնալը կրնան մեզ անտարբեր ու քննադատող դարձնել: Մեր մակերեսային բացատրութիւնները կրնան աւելի շուտ վնասել ու շփոթեցնել, քան օգնել կոտորածներուն ու տառապողներուն:

Քրիստոսը աշխարհ չեկաւ դատելու կամ բացատրութիւններ տալու: Ան եկաւ ու մասնակցեց մեր տառապանքին, եւ որպէս արդիւնք՝ փրկութիւն ու բժշկութիւն բերաւ: Ասիկա է այն կոչը, որով Աստուած կը դիմէ մեզ, որ մենք ալ նոյնը ընենք մեր ծանօթներու հետ:

## Ան, ով մինչեւ վերջ հաստատուն կը մնայ

«Իմ անուանս համար ամենուն ատելի պիտի ըլլաք. բայց ով որ մինչեւ վերջը համբերէ, անիկա պիտի ապրի» (Մատթ. 10:22):

Մինչեւ վերջ համբերելը դժուար է, երբ

- ձեր ոտքերն այլեւս ի վիճակի չեն ձեզ կանգուն պահելու,
- քաղցած էք եւ չեք գիտեր, թէ երբ ուտելու բան կ'ունենաք,
- ձեր մարմինը սառչած է եւ բաւարար գումար չունիք առետուր ընելու,
- ձեր զաւակները ձանձրացած են ամէն օր մակարոնեղէն ուտելէ,
- ձեր ամուսինը լքած է ձեզ,
- ձեր տանտէրը ամէն օր տան վարձքը կը պահանջէ,
- հիւանդ էք, սակայն գումար չունիք երթելու Երթեւեկութեան տոմսը գնելու,
- վիրահատութեան կարիք ունիք, բայց անընդհատ կը յետաձգէք այն՝ գումար չունենալու պատճառով,
- անընդհատ ցաւի մէջ էք և ոչ ոք չկայ ձեզ օգնող,
- երեխան կուլայ եւ գումար չունիք կաթ գնելու,
- շաքարախտով հիւանդ էք եւ ձեր մարմինը սպիտակէր է ինսուլինի պակասի պատճառով,
- ամէն օր գլխացաւեր ունիք արեան ճնշումն իջեցնող դեղեր չընդունելու պատճառով,
- ձեր զաւակները դպրոց կ'ուզեն երթալ, սակայն դպրոցացական պայուսակ և կօշիկ գնելու գումար չունիք:

Ասոնք այն իրավիճակներն են, որոնց ամէն օր կը բախտիինք կարիքաւորներու եւ փախստականներու հետ աշխատելու ժամանակ: Երբեմն մեր ոտքերը կը թոյլնան եւ Տիրոջ առջեւ ծունկի գալով կը խընդ-

րենք, որ Ան գթայ Հայաստանին եւ օգնութեան հասնի տառապանքի մէջ եղող հազարաւոր մարդկանց:

«Վասն զի Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը ու ընելը Իր հաճութեանը համար» (Փիլիպ. 2:13):

Աստուած կ'օգտագործէ իմ եւ ձեզ պէս մարդկանց: 5000-ին կերակրելու ժամանակ Յիսուսը հարցուց, թէ արդեօք որեւէ մէկը ուտելիք ունի՞. «Հոս պատանի մը կայ, որ հինգ զարիէ հաց ու երկու ձուկ ունի. բայց անոնք ինչպէ՞ս պիտի բաւեն այդչափ մարդոց» (Յովհ. 6:9):

Մենք սորվեցանք մեզ համար թուացեալ քիչը Տիրոջը տալ: Տէրը պիտի օրհնէ տուողին եւ ընդունողին: Վերջին 22 տարիներուն Տէրը միշտ հաւատարիմ գտնուեցաւ. բազմաթիւ երիտասարդներ ու ծերեր Տիրոջը մեծարեցին Իր բոլոր բարութեան համար:

Արդեօք ձեր հացն ու ձուկը պիտի բերե՞ք Տիրոջը, որպէսզի օրհնէ այն:

«ԱՄՄ»

